Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3350

792
Q-65

5767

45

334f

~~2110~~

2011

1086
792
Ա-65
(5767)

ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ։

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

(ՄԻՍԲՐԷՏՍՕ)

ԱՇԽԱՐՀԻՍ ՇՈՒՐՋԸ

80 ՕՐՈՒԱՅ ՄԷՋ

(„LE TOUR DU MONDE EN 80 JOURS“)

Հինգ գործողութիւնով, վերջաբանով եւ 15 պատկերներով

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Վ. ՓՕՐԿԱՑՑԻ

ԳԻՆԸ Է 10 ԿՈՊԷԿ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1888

25888-Ա.Հ.Հ.

Доз. ценз. Тифлисъ, 12-го Апрѣля, 1888 г.
Тип. М. Вартанянца, Тройц. пер. домъ № 11.

5439-56

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Փիլիոս Փոք—Անգղիացի
Պրոլոզ—Ֆրանսիացի
Ֆից—Անգլեացի
Արշիբալդ Կորսիկան—Ամերիկացի
Ֆլանդէն
Ոտիւարտ
Թալֆ
Սիւլեքան
} «Արտակարգների Կլուբի» անդամներ,
Աուդա—Հնդկուհի
Նէմէա—Հնդկուհի
Նակագիրա—Մալայուհի
Մարգարիտա—Անգլուհի
Կրոմարտի—Նաւապետ
Պարս
Մուստաֆա—Սուէզի նահանգապետ
Բրամինների առաջնորդ
Անդլեական մագիստրատ
Պավինների առաջնորդ
Հնդիկ պավին
1, 2 } Երկաթուղու գծի պահապաններ
Տելեգրաֆիստ
Կաֆէ-Ռեստորանի տէրը
Մաշինիստ
Նաւապետի օգնական
Կանդուկտոր
Մալայուհի

Հնդիկ մատրօսներ, Բրամիններ, Ֆակիրներ, «արտակարգների կլուբի անդամներ, երկաթուղում ծառայողներ, Գուսաններ, Մալայուհիներ, ստրուկներ, ստրկուհիներ, օձերի գիւթիչներ, Վէնգերչիներ, ֆելահներ, նեգրեր, թուրքեր յոյներ, սլաւոններ, սպանացիներ, անգղիացիներ, պարսիկներ, ամերիկացիներ, ֆրանսիացիներ, արաբացիներ, հրէից նուբիական եայլն ցեղեր։

2004

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Մի միլիոնի գրազ.

Դեկօրացիան ներկայացնում է «Արտակարգ մարդկանց կլուբը» Լոնդոնում: Պէտք է նկատել, որ, այդ ճշմարիտ արտակարգ հաստատութեան անդամներ կարող են լինել միայն այն անձինք, որոնք յայտնի են կեանքի մէջ իրենց ծայրահեղ արտակարգ բնաւորութիւնով: Բացի դրանից, անհրաժեշտ է որ նրանք լինեն բարձր ծագումից եւ մեծ հարստութեան տէր: Թէ որքան մանրակրկիտ են այդ արտակարգ մարդկանց կլուբի անդամները, նոր անդամ ընդունելու ժամանակ, կարելի է հասկանալ՝ հետեւեալ փաստից:—Մի ամերիկացի Արշիբալ-Կորսիկան անունով կամենում է դառնալ արտակարգ մարդկանց կլուբի անդամ եւ մի արտաքոյ կարգի քաջութիւն արած լինելու համար՝ նա դէպի յետ քայլելով պտտում է ամբողջ Կարմիր ծովի չորս կողմը. բայց կլուբի պարոն անդամները այդ կամաւոր չարչարանքին մի առանձին նշանակութիւն չեն տալիս եւ 'ի նկատի ունելով, որ Միացեալ նահանգների քաղաքացի Կորսիկանի անորոշ ծագումը փակում է նրա առաջ «արտակարգների կլուբի» դռները, նրան մերժում են: Այդ միջոցին 'ի միջի այլոց խօսք է ընկնում այդ օրերում անգլիական մի բանկից գողացուած 2,000,000 ֆրանկ գումարի մասին: Բանկը խոստացել է գողը բռնողին տալ իբրեւ վարձատրութիւն այդ գումարի 10%, այսինքն 200,000 ֆրանկ: Անդամներից մի քանիսը հաստատում են, որ գողը բռնելը այնքան էլ հեշտ չէ, որովհետեւ աշխարհս շատ մեծ է եւ նրա վրայ գողը միշտ ծածկուելու տեղ կ'գտնի, մանաւանդ երբ այդքան փող ունի գրպանում: Բայց անդամներից մինը, Թիլիաս Ֆոգ անու-

նով, նկատում է, թէ՝ ճշմարիտ է առաջ աշխարհը շատ մեծ էր, բայց այժմ «մեծ» խօսքի գործածութիւնն ուղիղ չէ, շնորհիւ այն կատարելագործուած հաղորդակցութիւնների, որոնց միջոցով կարելի է պտտել ամբողջ աշխարհի շուրջը 80 օրուան մէջ:

Այս մասին վէճ է ծագում անդամների եւ Ֆոգի մէջ ու վերջանում է նրանով, որ գրազ են գալիս 1,000,000 ֆրանկով: Այս դէպքը պատահում է կիւրակէ օրը, դեկտեմբերի 21-ին, ժամն ինն երեկոյեան: Ֆոգ, խսկոյն ուղարկում է իր Գաղղիացի ծառայի ետեւից, որ նոր էր մտել իրա մօտ, եւ հրամայում է նրան պատրաստուել ճանապարհ ընկնելու: Գաղղիացի ծառան—Պրօլազը լաւ վարձատրութիւնից գրաւուած, վճռում է ընկերանալ իր պարոնին ճանապարհորդութեան ժամանակ եւ հէնց միեւնոյն երեկոյեան ժամն 9-ին նրանք ճանապարհ են ընկնում Լոնդոնից:

2. ՏԵՍԱՐԱՆ

Եգիպտոս.

Դեկօրացիան ներկայացնում է Սուէզի ջրանցքի ափը եւ նաւահանգիստ: Ժողովրդի ահագին բազմութիւն խռնուած է ջրանցքի ափում եւ սպասում է «Մօնղոլիա» նաւի գալուն, որի վրայ պէտք է գան Ֆոգ ու Պրօլազ: Նաւին սպասողների մէջ իրենց վրայ առանձին ուշադրութիւն են դարձնում գաղտնի պոլիցիական Ֆիլ, որն ուղարկուած էր գտնելու թէ գողը եւ թէ 2,000,000 ֆրանկը (Ֆիլ ենթադրելով թէ գողն այդ ճարապարհով փախչում է ամերիկա, անհամբեր սպասում էր նաւի հասնելուն) եւ ամերիկացի Կորսիկան, որին սեւացրել էին «արտակարգների կլուբում». սա էլ սպասում էր նաւի գալուն, որ իմանայ թէ արդեօք ընտրուած է կլուբի անդամ, թէ ոչ: Վերջապէս նաւը մօտենում է նաւա-

հանգատին։ Նրա վրայից իջնում են Պերուացիք, անգլիացիք, ֆէլլահներ, թուրքեր, իսպանացիք, ամերիկացիք, յոյներ, սլաւոններ, խափշիկներ, արաբացիք, մալայացիք, հնդիկներ, ֆրանսիացիք եւայլն. դրանց հետ էլ Ֆոգ եւ Պրոլազ։ Պրոլազը դիմում է առաջին պատահած մարդուն եւ խնդրում է նրանից Կոնսուլի տունը ցոյց տալ։ Այս առաջին պատահող մարդը Ֆիցն է, որը նայելով Ֆոգի անցագրին, բոլորովին շուարում է նկատելով այն նմանութիւնը, որն ունի Ֆոգը իր փնտռած գողի հետ։ Ֆից իսկոյն հեռագրում է Լոնդոն, որ իրեն իրաւունք տան Ֆոգին ձերբակալել եւ միեւնոյն ժամանակ նրան աչքից չձգելու համար վճռում է գընալ նրա ետեւից։

Ամերիկացի Կորսիկան տեղեկանալով, որ իրեն կլուբի անդամ չեն ընդունել եւ իմանալով որ դրա պատճառը Ֆոգ անունով մէկն է, հրաւիրում է նրան մենամարտի. մենամարտն անյաջող է անցնում Կորսիկանի համար.—Ֆոգ վիրաւորում է նրա ձեռը։ Նա դրանից աւելի կատաղում է եւ վճռում՝ հետեւել Ֆոգին այնքան, մինչեւ որ նրան սպանի։ Այդպիսով Ֆոգի համար երկու նոր ճանապարհի ընկերներ են աւելանում, այն է—Ֆից եւ Կորսիկան։ Շոգենաւը ճանապարհ է ընկնում դէպի Հնդկաստան։

3. ՏԵՍԱՐԱՆ

Հնդկաստան.

Դեկորացիան ներկայացնում է Հնդիկի բնակարան, հընդիկը փարս ցեղից է, այստեղ թագնուած է երիտասարդ Հնդկուհի Աուդան, Բրամինների հալածանքից, որոնք փընտռում են նրան խարոյկի վրայ այրելու համար, որովհետեւ փարսերի օրէնքով մեռելների դիակները այրվում են եւ կենդանի կինը ողջ ողջ այրվում է իր մեռած մարդու դիակի

հետ։ Որքան որ նշանաւոր է եղել մարդը կենդանութեան ժամանակ, այնքան էլ փառաւոր եւ շքեղ կերպով է կատարվում այրելու հանդէսը։ Եւ որովհետեւ Աուդան եղել է Բաջայի (հնդիկների առաջնորդ) կին, այդ պատճառով նրան վիճակուած է այրուիլ շքեղ հանդիսով, ինչպէս մենք կը տեսնենք առաջիկայ գործողութեան մէջ։ Պատահմամբ գալիս են հասնում այդ խրճթին Ֆոգ եւ նրա հետեւողները։ Բոմբայի եւ Կալկաթայի մէջ տեղ գտնուած կամուրջի քանդուելը նրանց հակադրել է ուրիշ ճանապարհ որոնել, որը շարունակելու համար նրանք պէտք է կառք գտնեն։ Պրոլազի եռանդուն ջանքերը յաջողուել են. նա թէեւ կառք չէ գտնում, բայց գտնում է փիղ այդ միեւնոյն խրճթի տիրոջ մօտ եւ գնում է նրան 50,000 ֆրանկով։ Այդ ժամանակ Բրամինները Աուդայի հետքը գտնում են եւ բռնելով նրան տանում են, որպէս զի հետեւեալ առաւօտ այրեն։ Ֆոգ եւ նրա հետեւողները, որոնք ակամայ են այս տեսարանին, վճռում են անպատճառ ազատել թշուառ Աուդային եւ հէնց այդ նպատակով ընկնում են Բրամինների ետեւից։

4. ՏԵՍԱՐԱՆ

Բաջայի այրի կնոջ այրելը Հնդկաստանում, թագաւորական գերեզմանատանը։

Դեկորացիան ներկայացնում է հնդկական թագաւորական գերեզմանատունը, իրեն բոլոր մանրամասնութիւններով։ Մէջ տեղը շինած է զոհի սեղան, որի վրայ պառկած է Բաջան, Աուդայի մեռած մարդը. զոհի սեղանի տակ խարոյկը պատրաստած է։ Ահա երեւում է սրբազան հանդէսը Աուդայի ուղեկցութեամբ. առաջից գնում են ֆակիրներ, նրանց ետեւից զինուորներ սրբազան դրօշակներով, դրանց հետեւում են Բրամիններ շրջապատուած գուսաններով եւ մա-

նուվներով, որոնք նուիրուած են Բրամինի ծառայութեան։ Յետոյ գալիս է զինուորական նուագածուների խումբը, դրանց ետեւից կրկին գուսաններ եւ մանկլաւիկներ, որոնք փառաբանում են Բրահմինին սրբազան պարերով։ Դրանց ետեւից ստրուվները կառքով բերում են Կալին-սիրոյ եւ մահուան չաստծուն, որը չորս ձեռք ունի, երկու գլուխ եւ ամբողջապէս ներկուած է թանգագին մետաղներից, կուռքի չորս կողմը վազվզում են կիսամերկ մոլեռանդներ, զանազան ծամածռութիւններ են տնում, ծակծկում են ու կտրտում են իրենց մարմինները բութ դանակներով. միւսներն էլ իրենց ձեռքերը թաթախում են նրանց արիւնի մէջ եւ քսում են իրենց երեսին ինչպէս սրբութիւն. այդ մոլեռանդներին հետեւում են կրկին գուսաններ, դրօշակակիր զինուորներ, իշխաններ շքեղ զգեստաւորուած, արքայաղներ, դրանց ետեւից իրանց կանայք եւ կանանց ետեւից ստրկուհիք։ Վերջապէս երեւում է փիղը, որի վրայ նստած է Աուդան. նրա երկու կողմից գալիս են ստրուվներ շքեղ հովանոցները ձեռներին, որով պահպանում են նրան արեգակից. դրանց հետեւում են երկու ստրկուհիք, որոնց է յանձնուած Աուդայի վերջին հառաչները. դրանց էլ հետեւում են զինուորները, որոնց մէջ կան եւ մահուան դրօշակակիրներ. յետոյ գալիս է ահագին ամբոխ հանդիսաւորների, շքեղ, փայլուն զգեստներով։ Թափորը, այդ մոլեռանդութիւնը, զգեստները, փիղը, հանդիսի ամբողջ շքեղութիւնը մարդուս ակամայ փոխադրում են երեւակայական աշխարհը։ Թափորի վերջում Բրամինները սկսում են դիակներն այրելու հանդէսը։ Սրբազան ջահն արդէն պատրաստ է բորբոքեցնել խարոյկը երբ յանկարծ մեռած Բաջան կենդանանում, կանգնում է խարոյկի վրայից (սա Պրօլազն է շորերը փոխած)։ Բոլոր ներկայ եղողները կրօնական սարսափով ծունր երեսի վրայ են ընկնում, հրաշք համարելով կատարուածը։ Պրօլազը հանդիստ

կերպով դուրս է տանում Աուդային. Բրամիններից մէկը ուշքի գալով նրանց յետեւից է ընկնում, բայց այդտեղ ներկայ գտնուող Ֆոգի հրացանի գնդակը Բրամինին տեղն ու տեղը սպանում է։

ՏԵՍԱՐԱՆ 5.

Խուզարկու և ձերբակալութիւն.

Դեկորացիան ներկայացնում է մի հիւրանոց Կալկաթայում։ Ֆոգ, Կօրսիկան եւ Պրօլազ աջողութեամբ Աուդային յափշտակելով նրան իրանց հետ բերում են Կալկաթայ։ Այդտեղ ապրում է Աուդայի մօտ եւ նրա քոյրը որը նոյնպէս այդ օրերում այրիացել էր եւ պէտք է ենթարկուի նոյն վիճակին, ինչ վիճակի որ ենթարկուել էր Աուդան։ Ֆոգ եւ Կօրսիկան վճռում են նրան էլ ազատել եւ տանել նրանց միասին Լօնդօն. բայց այդ ժամանակ երեւում է խուզարկու Ֆիքը Բրամինի հագուստով եւ ձերբակալում է Ֆոգին։ Վերջինս առաջարկում է մագիստրատին փրկանք. նա նշանակում է 100,000 ֆրանկ։ Ֆոգ վճարելով այդ գումարը ազատվում է ձերբակալութիւնից եւ իր ուղեկիցների հետ միասին անմիջապէս ուղեւորվում է Կալկաթայից «Ռանգաուտ» շոգենաւով։ Խուզարկուն յուսահատուած, որ չկարողացաւ ձերբակալել Ֆոգին վճռում է էլի հետեւել նրան։

ՏԵՍԱՐԱՆ 6

Օձի քարայրը Բօրնէօ կղզու վրա, կամ օձերի կախարդուհին։

Դեկորացիան ներկայացնում է բնութեան մի քմածին վիմափոր այր, որն անուանվում «Օձերի սրբազան քարայրը»։ Մի դժբաղդ դէպք բերում է այդտեղ Ֆոգին եւ նրա ըն-

կերներին։ Նրանց շոգենաւը փոթորիկից քշուել է դէպի կղզին, որի վրա նրանք մի որեւ է բնակարան են փնտռում։ Տանջուած, սաստիկ շոգից դադրած, նրանք մտնում են քարայրը զովանալու։ Ֆոգ եւ Կորսիկան թողնում են Աուդային եւ Նեմէին այդ քարայրի մէջ, իսկ իրենք գնում են աւելի յարմար բնակարան որոնելու։ Պրոլազն էլ գնում է փայտ որոնելու խարոյկի համար, կանայք սպասում են նրանց վերադարձին, բայց դադրածութիւնից քունները տանում է եւ քնում են։ Այդ միջոցին սկսում սարսափելի տեսարան,—քարայրի բոլոր ճեղքերից դուրս են սողում բազմաթիւ թիւնաւոր օձեր։ Աուդան եւ իր քոյրը զարթնում են եւ սարսափած աղօթում են իրենց փրկութեան համար, Վիշապներից մին փաթաթվում է Աուդայի իրանքին եւ պատրաստ է նրան խեղդել բայց յանկարծ այդ վայրկեանին լսվում է օձերի կախարդուհի Նակագերայի աստուածային երգը. օձերը զմայլում են նրա մելոդիական երգերից, սողում են նրա ոտի տակ եւ քնում։ Գալիս են Ֆոգ. Կորսիկան. Ֆից եւ Պրոլազ։

ՏԵՍԱՐԱՆ 7

Կախարդների տունը։

Դեկորացիան ներկայացնում մի հոյակապ տաճար Բօրնէօ կղզու վրա, տաճարի ճարտարապետութիւնը օտարոտի է եւ նա շրջապատուած է տրոպիքական բոյսերով. Տաճարը եւ նրա մէջ եղողները լուսաւորուած լուսնի լուսնով եւ սրանց զգեստները շողշում է։ Նակագիրան, որ Աուդայի նախկին ստրուկն էր եւ ապա նրան աղատողն եղաւ օձերի քարայրում, նստած է գահի վրա, ինչպէս թագուհի. նրան շրջապատում են մալայ քուրմեր եւ քրմուհիք, միւսները պարում են նուագարանի վայրենի խաղով, Բօրնէօի ճաշակի համեմատ։ Այդ

զմայլելի եւ վայրենի տօնախմբութեան ներկայ են Ֆոգ, Կորսիկան, Աուդա. Նէմէա եւ Պրոլազ, որոնց պատուով ճանապարհ են դնում ու նրանք ուղեւորվում են Ս—Ֆրանցիսկո։

ՏԵՍԱՐԱՆ 8

Գաղտնի պոլիցիայի գործակալը.

Դեկորացիան ներկայացնում է Ս-Ֆրանցիսկոյի մի ճաշարան, որը ամերիկացիների սիրած տեղն է. այդտեղ 'ի միջի այլոց գտնվում է նաեւ խուզարկու Ֆիցը շորերը փոխած։ Ֆոգը եւ նրա ճանապարհորդակիցները հասնելով Ս-Ֆրանցիսկո, մտադրվում են անյապաղ շարունակել իրենց ճանապարհը Մեծ Ովկիանոսեան երկաթուղու գծով եւ այդ նպատակով յանձնում են Պրոլազին տոմսակներ գնել։ Պրոլազը գալով ճաշարան այդտեղ պատահում է Ֆիցին, որը հարբեցնում է Պրոլազին. եւ գողանում է նրա մօտ գտնուած տոմսակների փողերը, յուսալով այդ կերպով ուշացնել Ֆոգին Ս-Ֆրանցիսկոյում, մինչեւ որ ինքը հրաման կստանայ Լօնդօնից նրան ձերբակալելու։ Պրոլազն ուշքի գալով, նկատում է փողերի կորչիլը եւ յուսահատվում է. բայց խուզարկուի նենգամիտ ոստայնը ոչնչացնում է մեծահոգին Կորսիկան, տալով Պրոլազին այնքան փող, ինչքան հարկաւորէ տոմսակներ գնելու համար ու այդպիսով Ֆոգին աղատում է դժուար դրութիւնից։ Ցիմարացած խուզարկուն կրկին ծածուկ հետեւում է իր զոհին։

ՏԵՍԱՐԱՆ 9

Վայրենիների յարձակումը երկաթուղու գնացքի վրայ.

Դեկորացիան ներկայացնում է Հիւսիսային Ամերիկայի անապատներից մինչեւ Ուտախի մօտ, որտեղ գտնվում են յայտնի կարմրաշաշի պալին վայրենիների կատաղի խմբերը։

Այս անգամ պավիները կամենալով կողոպտել գնացքը կոտորել բոլոր ճանապարհորդներին, սպանում են Մեծ-Ովկիանոսեան երկաթուղու բոլոր պահապաններին, ճանապարհը կտրում են ձիւնով, կտրտում են հեռագրի թելերը ու սպասելով գնացքի հասնելուն թագնվում են: Կոնդուկտորը նկատելով որ ճանապարհը ձիւնով կտրած է մի լոկոմոտիվ է (շոգեկառք) է ուղարկում առաջուց, որ ճանապարհը մաքրեն: Լոկոմոտիվը գնում է ու ճանապարհը մաքրելով՝ մի քանի բոպէից յետոյ վերադառնում է վագոնների մօտ, որպէս զի նրանց վերցնէ ու ճանապարհ ընկնէ: Նղթան կցելով վագոններին՝ լոկոմոտիվը կրկին ճանապարհ է ընկնում, բայց վագոնները մնում են, որովհետեւ այդ միջոցին հնդիկներն արդէն կոտրել էին վագոնի շղթաները: Այդ ժամանակ նրանք յարձակվում են վանգոնների վրա, սկսվում է արիւնահեղ կռիւ ճանապարհորդների ու հնդիկների մէջ եւ միայն ճանապարհորդների հրաձիգ զէնքերի շնորհիւ հնդիկները յաղթվում են եւ փախչում: Մաշինիստը նկատելով որ վագոնները չկան, վերադառնում է բայց այդ շփոթութեան ժամանակ պավիներն արդէն փախցրել են Աուդային եւ Նէմէին: Ֆոգ, Կորսիկան ու Պրոլազ ժամանելով նրանց կորուստը վճռում են կրկին աղատել այդ թշուառներին եւ ընկնում են Պավիների ետեւից:

ՏԵՍԱՐԱՆ 10

Կռիւ վայրենիների հետ:

Դեկորացիան ներկայացնում է մի վայրենի տեղ Ամերիկայում «Հոկաների սանդուխք» անունով, բոլորովին ծածկուած ձիւնով ու սառուցով: Այդ սառցային թագաւորութեան մէջ հնդիկները թագցրել են երեքն զոհերին: Կորսիկան ու իր ընկերները ամերիկացի զինուորների հետ գալիս են հասնում այդտեղ: Այստեղ սկսվում է կատաղի կռիւ պավիների եւ զինուորների մէջ, որանք հազիւ կարողանում են ազատել Աուդային եւ Նեմէային եւ շնորհիւ Պրոլազի ճարպիկ հրացանաձգութեան:

ՏԵՍԱՐԱՆ 11

Ատլանտեան Ովկիանոսում:

Դեկորացիան ներկայացնում է «Ս. Գէնրիէտ» նաւի ներքնայատակը. Ֆոգ, Կորսիկան, Աուդա եւ Նեմէա նստած են նախաճաշակի, օրը պատրաստում է խոհարար նեգրը որն ուրիշ մարդ չէ եթէ ոչ շորերը փոխած ու ներկուած խուզարկու Ֆիցը. Պրոլազը ոյժով խլում է նրանից, նրա գողացած փողերը: Այդ միեւնոյն նաւի վրա նա հանդիպում է իր նշանած Մարգարիտային. որը մտնում է աղախին Քուդայ ու Նէմեայի մօտ: Պէտք է ասել որ այս բոլոր պատահած դէպքերը արգելք եղան Ֆոգին գալ Նիւեորք այնպէս որ հասնէ Լոնդոն ուղեւորող նաւին, հէնց այդ պատճառով նա տոմսակ վերցրաւ «Ս. Գէնրեէտ» նաւի վրա, որն ուղեւորվում էր Բօրդօ: Շտապելով համաձայն գրագին Լոնդոն հասնել նշանակուած օրը նա առնում է «Գէնրիէտ» նաւը եւ Բորդոյի փոխանակ նաւն ուղղում է դէպի Լիվերպուլ անգլիական հողի վրա:

ՏԵՍԱՐԱՆ 12

«Ս. Գէնրիէտ» նաւի պայթումը և կորուստը:

Դեկորացիան ներկայացնում է արձակ ծով, որի վրա լողում է շոգենաւը. իր բնական մեծութեամբ, նաւի վրա

գտնվում են մոտ հարիւր մարդ եւ այս բոլոր գործողութիւնը կատարվում է Ս. «Դէնրիէտ» ի վերնայատակի վրայ։ Ֆոգ եւ Կորսիկան իրանց վրա են առել նաւի կառավարութիւնը եւ պատահմամբ պատճառ են դարձել այն բոլոր դժբաղդութիւններին, որը մենք այժմ կտեսնենք։ Որպէս զի հաշուած ժամանակին Լիվերպուլ հասնեն, նրանք հրամայել են վառել վառարանները որքան կարելի, է շատ, եւ դեռ Լիվերպուլ հասնելու 50 լէն էր մնացած երբ վառելիքը հատաւ։ Հրավառները հնազանդելով նաւի տիրոջ կամքին, վառեցին բոլոր ածուխը. երբ այդ էլ վերջանում է, Ֆոգը հրամայում է կոտրտել կայմը, կողքերը, ներքնայարկերը, միով բանիւ ինչ որ կարելի է վառել։ Նոգիի կաթսան չէ դիմանում շոգիի չափազանց ոյժին եւ անչափաւոր ջերմութիւնից տրաքում է։ Մարդկանց սիրտ կտրտող աղաղակը խառնվում է կաթսայի տրաքոցի հետ, նաւը պայթում է եւ հանդիսատեսների աչքի առաջ գնում է ծովի յատակ։

ՏԵՍԱՐԱՆ 13

Անդունդի վրայ։

Դեկորացիան ներկայացնում է թանձր սեւ ամպեր, որոնք ծածկում են ծովը։ Կամաց կամաց ամպը ծանծաղանում է եւ երեւում են Ֆոգ, Պրոլազ ու Ֆից, որոնք մրցում են ալիքների հետ «Ս. Դէնրիէտ» նաւի փշրանքների վրա։ Հեռուն երեւում է լուսաւորուած Լիվերպուլ քաղաքը։

ՏԵՍԱՐԱՆ 14

Գրաղը կորած է

Դեկորացիան ներկայացնում է հիւրանոց Լիվիրպուլում։ Ալիքները դուրս են ձգել ափը Ֆոգին եւ Պրոլազին։ Ֆոգը

այդ օրը իր աշխարհի շուրջը պտտելու յիշատակարանին մէջ նշանակում է 80 երրորդ օրը. ուրեմն նա գրաղը տանուլ է տուել. ժամանակը լրացել է Լիվերպուլում։ Ինչպէս ազնիւ Ջէնրլմէն, Ֆոգը դնում է ծրարի մէջ մի 1,000,000 ֆրանք եւ ուղարկում է Պրոլազին որ այդ փողերը ձգէ փոշտը Լոնդոն, «արտակարգների կլուբ» անունով. Պրոլազը գալով փոստը փակած է գտնում եւ դուրս է գալիս, որ նրանց Լիվերպուլ հասած օրը Կիւրակէ է եւ ոչ թէ Երկուշաբթի, ինչպէս նշանակուած է Ֆոգի յիշատակարանում։ Պրոլազը վազում է իր տիրոջը ուրախ լուր հաղորդելու։ Ֆոգ հաշուելով ժամերն ու րոպէները գալիս է հետեւեալ եզրակացութեան.—նա ճանապարհ է ընկել պտտելու աշխարհի շուրջը արեւմուտքից դէպի արեւելք, միշտ գնացել է արեգակի դէմ, հետեւաբար իւրաքանչիւր օր ամեն մի անցած աստիճանի հետ օրը 4 րոպէ պակասել է. եւ որովհետեւ 360 գրադուս է գնացել ուրեմն պակասել 14 40 րոպէ որ կանէ 24 ժամ։ Աւելի պարզ ասել Ֆոգ հանդիպում էր արեգակին Լիվերպուլում 80 երրորդ անգամ իսկ Լոնդոնի եւ Լիվերպուլի բնակիչները միայն 79 անգամ։ Ուրախացած այսպիսի մի անպատելի գիւտով, նրանք իսկոյն ճանապարհ են ընկնում Լոնդոն, բայց այդ միջոցին վրա է հասնում Ֆից եւ յայտնում է Ֆոգին, որ ինքը Ֆիցը իրաւունք ունի նրան բանտարկել իբրեւ գողի, որն արդէն գտնվում է անգլիական հողի վրա. բայց այստեղ էլ մեծահոգի ամերիկացի Արչիբալդ Կորսիկանը ազատում է Ֆոգին։

ՏԵՍԱՐԱՆ 15

Տօն «արտակարգների կլուբում»

Դեկորացիան ներկայացնում է փառաւոր ու շքեղ զարդարուած դահլիճներ «արտակարգների կլուբում». դահլիճները

լիքն են անգամներով, որոնք խօսում են այն գրաղի մասին, որն իրենք արել են Ֆոգի հետ եւ որն այնքան աղմուկ է պատճառել Լօնդօնում։ Նայած բոլոր հանգամանքներին եւ անգամների եզրակացութեան՝ պէտքէ որ իրենք տարած լինեն գրաղը. փաստերը սրանք են.—նաւը, որի վրա կարող էր Ֆոգը գալ երեկ Նիւօրքից. հասել է արդէն երեկ, նրա վրա եկողների մէջ Ֆոգի անունը չէ յիշվում։ Լիվերպուլից երկաթուղու գնացքը եկել է 7 ժամ 37 րոպէին, իսկ երկրորդ գնացքը պէտք է գայ մի քանի ժամով անց գրաղի նշանակած ժամից։ Եթէ նա առաջինով եկած լինէր. այժմ պէտքէ արդէն Կլուբում, գտնուէր որովհետեւ արդէն շուտով 9 ժամը կլինի. իսկ եթէ երկրորդով գայ, կուշանայ եւ գրաղն արդէն տարուած կլինի...

ՀԱՅԿ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՍՏԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱՅՈՒՂ

5439-56

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ԱՄՍՀ
ԿՈՄ. Ա. ՄԱՆՈՒԱՅԻ ԱՆՎԱՆ
Ա. ՄԱՆՈՒԱՅԻ ԱՆՎԱՆ

3350

0012363

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0012363

30 n. Urzędnicy. 97. Pantke.